13041

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 09 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0140-22

Ձեռնարկողը՝ ***«Յունիոն» ՍՊԸ***
ք. Երևան, Մ.Սարյան 26.2

Գործունեությունը՝ ***Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՐԷ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0140-22

<<28**>>**09 **2022թ.**

Լոռու մարզի Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՐԷ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Յունիոն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	/Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Տաշիր համայնքի, Սարատովկա բնակավայր

«Յունիոն» ՍՊ ընկերությունը նախատեսում է ստանալ Լոռու մարզի Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՐԷ հորատանցքում հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական (շշալցման) նպատակով՝ 20 տարի ժամկետով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի դ. ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի Սարատովկա գյուղի վարչական տարածքում՝ Տաշիր գետի կիրճում՝ գետի ձախ ափից մոտ 15.0մ հեռավորության վրա: Հորատանցքի բացարձակ բարձրությունը կազմում է 1469.4մ:

Հանքավայրի տարածքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS 84 համակարգով հետևյալն են.

X = 4549747 Y = 8442148

Համաձայն հաշվետվության հանքային աղբյուրի տարածքում սողանքային երևույթները բացակայում են: Հայցվող տարածքի շրջանում հիմնական մակերևութային ջրային միավորը Տաշիր գետն է, շրջանը հարուստ է խորքային՝ արտեզյան ջրերով և աղբյուրներով: Տարածքը ներկայացված է ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով, որոնք ծածկում են լավային ապարների (բազալտներ, անդեզիտա-բազալտներ) հզոր շերտը:

Հանքավայրի շրջանը բնութագրվում է չափավոր տաք ամառով, չափավոր ցուրտ ձմեռով, օդի խոնավության բարենպաստ չափերով (58-62%), քամու բարենպաստ ռեժիմով (միջին տարեկան արագությունը 2.1 մ/վրկ, միջին ամսական արագությունները՝ 1.6-3.4 մ/վրկ):

Ձմեռը երկարատև է, կայուն ձյան շերտով: Հունվարի միջին ջերմաստիճանը՝ - 4.8°C, բացարձակ նվազագույնը հասնում է - 34°C:

Տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 722մմ:

Ձորագետի հանքավայրի շրջանում տարածված են հիմնականում սևահողերը, առանձին փոքր հատվածներում զարգացած են մարգագետնային սևահողերն ու գետահովտադարավանդային մարգագետնա-ճմային հողերը:

Հանքային աղբյուրի տարածքը հարուստ է ինչպես քաղցրահամ, այնպես էլ հանքային ջրերով: Շրջանի հիմնական ջրային զարկերակը հանդիսանում Է Ձորագետ գետը:

Համաձայն հաշվետվության՝ Սարատովկա գյուղի շրջակա տարածքում և բուն հանքավայրի տարածքում Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակ չեն հայտնաբերվել, ինչպես նաև պատմամշակության ժառանգության օբյեկտներ չկան:

Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի մանրամասն հետախուզական աշխատանքները կատարվել են 1991-1993թթ.-ին, որի արդյունքում յոթ հորատանցքերով հաշվարկվել և ՀՀ կառավարությանն առընթեր օգտակար հանածոների պաշարների հանձնաժողովի (ՕՀՊՀ) կողմից 01.11.1993թ.-ի դրությամբ (արձանագրություն թիվ 6, 24.12.1993թ.) հաստատվել են Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործական պաշարները, այդ թվում՝ 2ՐԷ հորատանցքով - Բ կարգի՝ 1.66 լ/վրկ կամ 143.4 մ^3/օր, ազատ ածխաթթու գազի պաշարները՝ 2ՐԷ և 6/90 հորատանցքերով - Բ կարգի՝ 0.34 լ/վրկ կամ 29.4 մ^3/օր:

Համաձայն հաշվետվության հանքային ջրի 2ՐԷ ջրատար միջակայքերը տեղադրված են՝ 191.5-250.0մ խորություններում, ջրերի ջերմաստիճանը տատանվում է՝ 15.0-17.3°C, իսկ հանքայնացումը՝ 2.2-3.8գ/լ սահմաններում, իսկ ստատիկ մակարդակը՝ + 0.69-ից մինչև +3.84 մետրը:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին:

Ձորագետի հանքավայրի հանքային ջուրը ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատ-սուլֆատային, մագնեզիում-նատրիումային է, մասամբ մագնեզիում-կալցիումային:

Լուծված CO_2 գազի պարունակությունը կազմում է 1.4-2.3գ/լ, իսկ ազատ CO_2 գազինը՝ 1.06-1.28գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտներից բորի պարունակությունը կազմում է մինչև 0.8 մգ/լ, բրոմինը՝ 0.25-1.0մգ/լ, յոդինը՝0.12-0.5մգ/լ: Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Ըստ ջրածնային ցուցանիշի հանքային ջուրը թույլ թթվայինից մինչև թույլ հիմնային է:

Ռադիոակտիվ էլեմենտներից ուրանի պարունակությունը կազմում է 1.2x10-9գ/լ, ռադիումինը՝5.0x10-10գ/լ, հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Հանքավայրի հանքային ջրի շահագործական պաշարները կարող են օգտագործվել արդյունաբերական շշալցման և առողջանարային բուժման համար:

Համաձայն հաշվետվության ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 1.66 լ/վրկ կամ 52349.8 մ^3/տարի: Հանքային ջրից ազատ ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում, քանի որ թիվ 2ՐԷ հորատանցքում ազատ գազի պարունակությունը հանքային ջրում կազմում է ընդամենը 1.06գ/լ: Ազատ ածխաթթու գազը ընկերությունը կգնի Լիճքի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրից:

Ընկերությունը նախատեսում է հանքային ջրի արդյունահանման իրավունք ստանալուց հետո (3 տարվա ընթացքում) Լոռու մարզի Տաշիրի համայնքի Սարատովկա գյուղի վարչական տարածքում ձեռք բերել հողակտոր և կառուցել հանքային ջրի շշալցման գործարան իր ենթակառուցվածքներով:

Մինչ այդ ընկերությունը շշալցման գործունեությունը կիրականացնի Երևան քաղաքում գտնվող՝ իր սեփականությունը հանդիսացող, շշալցման գործարանի տարածքում, որտեղ ընկերությունը կատարում է քաղցրահամ ջրի և ըմպելիքների շշալցում:

Հանքավայրի թիվ 2ՐԵ հորատանցքից դեպի շշալցման գործարան հանքային ջրի տեղափոխումը կիրականացվի ԿԱՄԱԶ 53229 մակնիշի բեռնատար մեքենայով՝ կահավորված չժանգոտվող պողպատից պատրաստված 13.2տ տարողությամբ ցիստեռնով:

Գործարանում տեղադրված ժամանակակից սարքավորումների հզորությունները լիովին բավարարում են հանքային ջրի արդյունահանման իրավունքի ստացման դեպքում իրականացնել նաև հանքային ջրի շշալցում:

Ընկերությունը շշալցված հանքային ջուրն իրացնելու է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Համաձայն հաշվետվության Ընկերությունում ստեղծված են ժամանակակից արտադրության բոլոր պահանջներին բավարարող արտադրական պայմաններ:

Պայմանավորված աշխատանքների բնույթով և տեսակներով, հանքային ջրի արդյունահանման իրականացմամբ լանդշաֆտի ամբողջականության, հողային ռեսուրսների, կեսաբազմազանության և մթնոլորտային օդի վրա զգալի ազդեցություններ չեն նախատեսվում: Գործունեության իրականացումը չի ուղեկցվում արտադրական և ընդերքօգտագործման թափոնների, ինչպես նաև արտադրական հոսքաջրերի առաջացմամբ: Հանքային աղբյուրի շահագործման արդյունքում փոշու արտանետումներ չեն նախատեսվում:

Ըստ հաշվետվության ընկերությունն օգտվելու է արդեն իսկ գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից, նոր շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում:

Հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ, ինչի նպատակն է հանքային ջրերի պահպանությունը և աղտոտման կանխարգելումը:

Ջրհավաք հորատանցքի շուրջը ստեղծվելու է սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտի, որը ցանկապատվելու և ապահովվելու է պահպանությունով:

Հորատանցքի շուրջ կատարվելու է ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի հոսքը դեպի հորատանցք:

Կապտաժային շինության շուրջը բացառվելու է ցանկացած տեսակի գործունեություն, որը կարող է որևէ կերպ ազդել հանքային ջրի որակի վրա:

Սանիտարական պահպանության գոտու տարածքում խախտված հողերի ռեկուլտիվացիայի համար նախատեսված է 100.000 դրամ գումար:

Ջրառի արդյունքում մթնոլորտային օդն աղտոտող արտանետումներ չեն լինելու, արդյունահանման աշխատանքների նպատակն է բնական պաշար հանդիսացող հանքային ջրի արդյունավետ և նպատակային օգտագործումը:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ:

Գործունեության իրականացման արդյունքում նախատեսվող միջոցառումներն ամփոփվել են շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում:

- Ադխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը իրականացվելու է հատուկ ջրհավաք (կապտաժային) չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով:

- Ադխաթթվային հանքային ջրի հանքավայրի շահագործումն իրականացվելու է հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

- Իրականացվելու է սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք աղբյուրի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Հանքային աղբյուրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև աղբյուրի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:

- Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

- Հակավթարային միջոցառումներ, անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ:

- Գործունեության հարակից տարածքները չեն խախտվելու և չեն աղտոտվելու կենցաղային աղբով և այլ տեսակի թափոններով:

- ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի N781 որոշման պահանջներին համապատասխան նախատեսվելու է բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ելնելով վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ պայմանավորված աշխատանքների բնույթով և տեսակով, շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հանքային ջրի արդյունահանման ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, գործունեությունը չի ուղեկցվում արտադրական և ընդերքօգտագործման թափոնների առաջացմամբ, մթնոլորտային արտանետումներով, ինչպես նաև վտանգավոր արտահոսքերով: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ընկերությունը կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի նոր աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի Լոռու մարզի Տաշիրի համայնքի և Սարատովկա գյուղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի Տաշիրի համայնքի և Սարատովկա բնակավայրում՝ Ձորագետի ադխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՊԷ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/: Հանրության կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության, քննարկվել է ընկերության կողմից համայնքի համար նախատեսվող սոցիալական ու ներդրումային ծրագրերի և ստեղծվելիք աշխատատեղերի հարցը:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Լոռու մարզպետարանը, Տաշիրի համայնքապետարանը, Սարատովկա բնակավայրը, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Փորձաքննական պահանջներ

1. Ձորագետի ադխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՊԷ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ընթացքում, սանիտարա-հիգիենիկ պայմանների

ապահովման, ինչպես նաև հորատանցքը աղտոտումից և սպառումից զերծ պահելու նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 2003թ. մարտի 10-ի N 137 հրամանի պահանջներով:

2. Հաստատված պաշարների քանակին, որակին և ռեժիմին համապատասխան հանքային ջրի արդյունահանումն իրականացնելու նպատակով, անհրաժեշտ է ըստ ժամանակացույցի ապահովել հորատանցքի շահագործման ռեժիմի ու տեխնիկական վիճակի և ջրի ծախսի, ջերմաստիճանի և այլ պարամետրերի նկատմամբ մշտադիտարկումներ և նմուշարկումների իրականացումը՝ առաջնորդվել ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի N1484-Ն և 2018թ. փետրվարի 22-ի N191–Ն որոշումների պահանջներով:

3. Անհրաժեշտ է նախատեսվող շշալցման գործարանի կառուցման փաստաթղթերը՝ մինչև իրականացումն՝ Օրենքով սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Յունիոն» ՍՊԸ կողմից ներկայացված Լոռու մարզի Ձորագետի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2ՐԵ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան